ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

23 փետրվար 2018, № 26. 2

Ղեկավարվելով Շիրակի պետական համալսարանի կանոնադրության 48-րդ կետի 13-րդ ենթակետով, Գիտական խորհրդի կանոնակարգի 2.2.13 կետով՝

ՇՊՀ-ի գիտական խորհուրդը ո ր ո շ ու մ է.

ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I. ՇՊՀ գիտական խորհուրդը, հիմք ընդունելով վերջին 5-6 ամիսների ընթացքում տեղի ունեցող իրադարձությունները՝ կապված բուհի անունը անհարկի շահարկելու, բուհը վարկաբեկելու, բարոյահոգեբանական մթնոլորտը խաթարելու, դասապրոցեսները կազմալուծելու, ամբողջ բուհում և հատկապես սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետում, պատմության և փիլիսոփայության ամբիոնում անառողջ մթնոլորտ ստեղծելու, ՇՊՀ գիտական խորհրդին վարկաբեկելու, ուսանողներին բարեվարքության սկզբունքին հակառակ դաստիարակելու հետ, ինչի պատճառով բուհը կրել և կրում է ֆինանսական և վարկանիշային կորուստներ, որոշում է դիմել ռեկտորին՝ ձեռնարկելու անհրաժեշտ քայլեր երկշաբաթյա ժամկետում խնդրին անհապաղ լուծում տալու համար:
II. Քանի որ ՇՊՀ-ի պատմության և փիլիսոփայության ամբիոնի վարիչի ԺՊ Հ.Խորիկյանի և դասախոս Գ.Համբարյանի պահվածքն այլևս վստահություն չեն ներշնչում և անհամատեղելի են դասախոսի աշխատանքին, ՇՊՀ-ի գիտական խորհուրդը որոշում է ձևավորել էթիկայի հանձնաժողով՝ բաղկացած 5 անձից՝ վերոնշյալ հարցը քննարկելու.

1. **Խաչատրյան Վալերի Գրիգորի** — Արհեստակցական կազմակերպության նախագահ

2. **Սերոբյան Երվանդ Սերյոժի** — Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր

3. **Հովհաննիսյան Անահիտ Սերյոժայի** — Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր

4. **Հակոբյան Լիզա Հելբերդի** — Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ

5. **Չարչողլյան Արթուր Էդվարդի** — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմության» բաժնի 2-րդ կուրսի ուսանող, ՈՒԽ նախագահի տեղակալ

III. Հանձնաժողովը տասը աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է կայացնելու որոշում, որը կարող է հիմք հանդիսանալ ՇՊՀ -ի՝ 2017թ-ի հունվարի 30-ին հաստատված «Էթիկայի սկզբունքներ»-ով սահմանված կարգապահական տույժերի կիրառման համար:

IV. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հիմք՝ ՇՊՀ գիտական խորհրդի 12.02.2018թ-ի N 25.1 որոշումն ու 23.02.2018թ.-ի թիվ 26 գիտական խորհրդի արձանագրությունը / կից ներկայացվում է/:

ՇՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ՄԻՆԱՍՅԱՆ